ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ԻՄ ՔԱՅԼԸ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄԸ

2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-ԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԵՐԸ ԵՐԿՈՒ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԻՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 44-րդ հոդվածի 6-րդ մասով և 8-րդ մասի 2-րդ կետով «Իմ քայլը» խմբակցությունը որոշում է.

2021թ. հունիսի 30-ին, ժամը 11:00-ին նախաձեռնողների սահմանած օրակարգով՝«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (Կ-897-12.03.2021,27.04.2021-ՖՎ-011/1), «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» (Կ-887-03.03.2021-ՖՎ-011/1), «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» (Պ-866-15.02.2021,30.04.2021-ՊԻ-011/1), Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (Պ-825-28.12.2020,30.04.2021-ՊԻ-011/1), «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին, «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին,

095, Երևան, Մ. Բաղրամյանի պող., 19 Հեռ.՝ (374 11) 513 281

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին (Կ-891-09.03.2021-ԳԿ-011/1), «Կինեմատոգրաֆիայի մասին» (Պ-910-26.03.2021-ԳԿ-011/1), «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, «Գնումների մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին, (Կ-907-23.03.2021-ՏՀ-011/1) ՀՀ օրենքների նախագծերը երկրորդ ընթերցմամբ, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, «Բանկային գաղտնիքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (Կ-637-14.06.2021-ՊԻ-011/0), Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» (Կ-993-08.06.2021-ՏՀ-011/0), «Տարածքային կառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին»,«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» (Պ-1003-29.06.2021-ՏՏԳԲ-011/0), «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին, «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին»(Կ-964-05.05.2021-ՊԻ-011/0), ««Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (Պ-838-13.01.2021,19.05.2021-ՊԱ-011/0), «Բազմաբնակարան շենքի

կառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» (Պ-961-04.05.2021-ՏՏԳԲ-011/0), Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» (Պ-851-29.01.2021-ՊԻ-011/0), «Քաղաքաշինության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» (Պ-948-26.04.2021-ՏՀ-011/0) ՀՀ օրենքի նախագծերը առանց գլխադասային հանձնաժողովի եզրակացության առաջին ընթերցմամբ, ինչպես նաև այդ նախագծերի փաթեթը երկրորդ ընթերցմամբ քննարկելու և Ազգային ժողովի արտահերթ նիստ գումարելու վերաբերյալ:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունը (այսուհետ՝ ՀՀ) շարունակական քայլեր է ձեռնարկում փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման (այսուհետ՝ ՓԼ/ԱՖ) դեմ պայքարի համակարգը միջազգային ստանդարտներին համապատասխանեցման ուղղությամբ: Այսպես, 2018թ.-ի մարտի 1-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել են «Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում (այսուհետ՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին օրենք) եւ այլ հարակից օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը՝ ի կատարումն 2015թ.-ի Եվրոպայի խորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի փորձագետների կողմից ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի 5-րդ փուլի գնահատման արդյունքում արձանագրված մի շարք հանձնարարականների:

2018թ.-ի հուլիս ամսին ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի կողմից հաստատվել է Հայաստանի Առաջընթացի առաջին հաշվետվությունը՝ ՀՀ փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման (այսուհետ՝ ՓԼ/ԱՖ) դեմ պայքարի 5-րդ փուլի գնահատման հաշվետվությամբ տրված հանձնարարականների կատարման մասով: ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի կողմից արձանագրվել է, որ ընդհանուր առմամբ բացահայտված տեխնիկական թերությունների վերացման ուղղությամբ Հայաստանը արձանագրել է զգալի առաջընթաց, այդուհանդերձ, դեռեւս առկա են ՖԱԹՖ-ի հանձնարարականների իմպլեմենտացման որոշ թերություններ:

«Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) ներկայացվող փոփոխությունները եւ լրացումները նպատակ ունեն վերացնել ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի կողմից արձանագրված մի շարք թերություններ եւ Օրենքի կիրառման ընթացքում ի հայտ եկած անհստակությունները.

Բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի (այսուհետ՝ Ռեեստր) ստեղծման անհրաժեշտությունը պայմանավորված է կոռուպցիայի դեմ պայքարի գործիքակազմի արդյունավետության բարձրացմամբ եւ բխում է ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշմամբ հաստատված ՀՀ 2019-2022 թթ. հակակոռուպցիոն ռազմավարությունից: Նմանատիպ ռեեստրները լայն տարածում ունեն նաեւ ԵՄ երկրների շրջանում, մասնավորապես՝ Չեխիայում, Իսպանիայում, Լատվիայում, Ֆրանսիայում, Մալթայում, Մոլդովայում, Ավստրիայում եւ այլն: Ընդհանուր առմամբ ԵՄ երկրներում նման ռեեստրների լայն տարածումը

պայմանավորված է ԵՄ 2015թ-ի 4-րդ (2015/849) եւ 2018թ-ի 5-րդ (2018/843) դիրեկտիվների պահանջների իմպլեմենտացմամբ:

3. Նախագծով առաջարկվում է փոփոխել եւ լրացնել «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, ինչի արդյունքում պայմանագրից բխող իրավունքների պետական գրանցումը կարող է ուժը կորցրած ճանաչվել այդ իրավունքների պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից.

1. պայմանագրի որեւէ կողմի դիմումի հիման վրա, եթե պայմանագրի գործողության ժամկետը ավարտվելուց հետո օրենքով կամ պայմանագրով նախատեսված չէ, որ պայմանագրի գործողության ժամկետն ավարտվելուց հետո պայմանագիրը համապատասխան պայմանների պահպանված լինելու դեպքում ճանաչվում է վերսկսված.

2. եթե պայմանագրի գործողության ժամկետը ավարտվելուց հետո օրենքով կամ պայմանագրով չնայած նախատեսված է, որ պայմանագրի գործողության ժամկետն ավարտվելուց հետո պայմանագիրը համապատասխան պայմանների պահպանված լինելու դեպքում ճանաչվում է վերսկսված, սակայն պայմանագրի գործողության ժամկետն ավարտվելու օրվան հաջորդող 30 աշխատանքային օրվա ընթացքում այդ պայմանագրի կողմերից որեւէ մեկի կողմից ներկայացվել է դիմում.

3. պայմանագրի կողմերից որեւէ մեկի դիմումի հիման վրա օրենքով կամ պայմանագրով նախատեսված՝ պայմանագրից հրաժարվելու ծանուցման մասին փաստը հաստատող փաստաթուղթը ներկայացնելով.

4. պայմանագրի որեւէ կողմի դիմումի հիման վրա օրենքով կամ պայմանագրով նախատեսված դեպքում որոշակի իրադարձությունների վրա հասնելու պայմաններում պայմանագրի գործողության անհնարինությունը նախատեսող փաստը հաստատող փաստաթուղթը ներկայացնելով:

Նախագծի ընդունմամբ ակնկալվում է երաշխավորված նյութական իրավունքի գործնականում իրացնելու ապահովում:

Հայաստանի Հանրապետությունում վերջին ժամանակահատվածում ձեւավորվել է այնպիսի պրակտիկա, որ դատարանները գրեթե բոլոր գործերով ձերբակալման արձանագրությունները ճանաչում են ոչ օրինական եւ ազատ են արձակում կասկածյալներին, պատճառաբանելով որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով բացակայում են իրավական հիմքերը:

Նման երեւույթը կարող է հանգեցնել հանցավորության աճին եւ բացասական հետեւանքներ թողնել Հայաստանի Հանրապետության բնակչության եւ պետության

համար: Վերը նշված խնդիրը կարգավորված է ՀՀ քրեական դատավարության նոր նախագծով, ուստի գտնում ենք, որ անհրաժեշտություն կա այդ նախագծի համապատասխան գլուխը ուժի մեջ մտնի ավելի շուտ, քան նախատեսված էր: Առաջարկվող նախագծով ընդարձակվում են ձերբակալության հիմքերը եւ հստակեցվում ձերբակալության կարգը:

ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի բարեփոխումներով է պայմանավորված ՀՀ օրենքների նախագծերի փաթեթների ընդունումը:

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է ապահովել «Թմրամիջոցների եւ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքով սահմանված արտադրական կանեփի օրինական շրջանառության նկատմամբ պատշաճ վերահսկողություն՝ օրենքի պահանջների խախտման դեպքում կիրառելով պատասխանատվության միջոցներ:

«Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի փոփոխությամբ հնարավորություն կստեղծվի համապատասխան ոլորտները կարգավորող օրենքներով ՊՈԱԿ-ի տնօրենների գործունեության արդյունավետության եւ հաշվետվողականության բարձրացման չափելի եւ տեսանելի չափանիշներ սահմանել՝ կախված ոլորտային առանձնահատկություններից: Նշված փոփոխությունների արդյունքում տնօրենի լիազորությունները դադարեցնելու հիմքերը կդառնան ավելի նպատակային եւ ուղղակի կապ կստեղծվի ակընկալվող կատարված աշխատանքի եւ դրա չկատարման պատճառով լիազորությունների դադարման միջեւ:

Առաջարկվող փոփոխության շնորհիվ հնարավորություն կստեղծվի համապատասխան ոլորտը կարգավորող օրենքներում նախատեսել կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցնելու այլ հիմքեր:

Նախագծի ընդունումը հնարավորություն կտա որոշակիորեն մեղմել ցածր եւ միջին աշխատավարձ ստացող քաղաքացիների եւ անհատ ձեռնարկատերերի վրա ընկնող ֆինանսական բեռը՝ դրան զուգահեռ ավելացնելով 1.5 մլն. դրամից բարձր եկամուտներ ստացողների մասնակցության չափը:

«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքն ընդունվել է 2002 թվականի մայիսի 7-ին եւ դրա կիրառման ժամանակ ակնհայտ է դարձել, որ հնարավոր չէ ապահովել բազմաբնակարան շենքերի 100% սեփականատերերի մասնակցությունն ընդհանուր ժողովին:

Սա պայմանավորված է մի շարք պատճառներով, որոնցից են օրինակ, որ Հայաստանի Հանրապետությունում չկա այնպիսի բազմաբնակարան շենք, որտեղ բոլոր սեփականատերերը բնակվում են, ավելին, բնակիչների մի մասը, ովքեր բնակարան են

ժառանգել, չեն ընդունել իրենց ժառանգությունը կամ խնդիր ունեն իրենց փաստաթղթերի հետ եւ չեն կարող լիազորել որեւէ մեկին իրենց փոխարեն քվեարկելու, կամ որն է այդ անձի շահը գումար ծախսել եւ լիազորել որեւէ մեկին իր անունից հանդես գալ բազմաբնակարան շենքի ընդհանուր ժողովին:

Նախագծով առաջարկում ենք վերանայել ընդահուր ժողովի մասնակիցների համամասնությունը, թե ովքեր ունեն քվեարկելու իրավունք, ինչ կարգով է ընթանում ընդհանուր ժողովի գումարման ընթացակարգը եւ այդ իրավունքների իրականացման հնարավորությունները:

Մեր կողմից առաջարկվող փոփոխությունները պայմանավորված են առկա պրակտիկայով եւ միտված են բազմաբնակարան շենքի բնակիչներին կառավարելու եւ իրենց իրավունքներն իրացնելու մեխանիզմների հստակեցմանը:

Ավելին, կարծում ենք՝ այս կարգավորումը նաեւ կանխատեսելիություն կտա ներդրումային նախագծերի իրականացման գործընթացներում:

Նախագծի ընդունման պարագայում տեսահսկման մշտադիտարկման եւ ամբողջական տեսանկարահանման կիրառումը հնարավորություն կտա լիարժեք ապահովել շինարարական հրապարակներում իրականացվող քաղաքաշինական գործունեության նկատմամբ պետական տեսչական վերահսկողությունը, նպաստելով նաեւ հանրային վերահսկողությանը: Ի լրումն, սա հնարավորություն կընձեռի աստիճանաբար անցում կատարել էլեկտրոնային հասարակությանը, նվազեցնելով հնարավոր կոռուպցիոն ռիսկերը, որոնք թերեւս առկա են ներկա փաստաթղթաշրջնառության կառուցակարգերում:

Օրենքների նախագծերի ընդունումը պայմանավորված է ոլորտում իրավահարաբերությունների կարգավորման եւ ոլորտի զարգացման անհրաժեշտությամբ, որը կապահովի իրավական դաշտում օգտագործվող եզրույթների միասնականությունը եւ հիմք կհանդիսանա այլ իրավական ակտերի մշակման եւ կիրարկման համար:

Նախագծերի ընդունմամբ ակնկալվում է ունենալ նախադպրոցական կրթական ծրագրերով եւ ծառայություններով գործունեության լիցենզիաների պայմանների եւ պահանջների պահպանման նկատմամբ միասնական վերահսկման մեխանիզմներ, եւ դրանք չպահպանելու դեպքում պատժամիջոցների կիրառման հստակ չափանիշեր՝ նախադպրոցական կրթական ծրագիր եւ ծառայություն իրականացնող բոլոր ուսումնական հաստատությունների համար՝ ապահովելով կրթության որակի

բարձրացումը, միասնական համակարգի ստեղծումը եւ արդյունավետ գործունեությունը:

Միաժամանակ կապահովվի պետական տուրքերի գանձումը պետական բյուջե շուրջ 6 000 000 դրամ գումարի չափով: Հաշվի առնելով, որ նախադպրոցական կրթական ծրագրի եւ նախադպրոցական ծառայության իրականացման համար նախատեսվում է տրամադրել մեկ լիցենզիա (հաշվի է առնվելայն հանգամանքը, որ նախադպրոցական ուսումնական հաստատությունների գերակշիռ մասը եւ կրթական ծրագիր են իրականացնում եւ ծառայությունենմատուցում) պետական տուրքի չափը նախատեսվում է 20 000 դրամ գումարի չափով:

«ԻՄ ՔԱՅԼԸ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. ՄԱԿՈՒՆՑ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-ԻՆ ԳՈՒՄԱՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1.Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 44-րդ հոդվածի 5-րդ մասը Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

1) Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների առնվազն մեկ քառորդի նախաձեռնությամբ 2021թ-ի հունիսի 30-ին գումարված Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանի օրակարգում երկու ընթերցմամբ ընդգրկված նախագծերի երկրորդ ընթերցմամբ քննարկումը կազմակերպել առաջին ընթերցմամբ դրա ընդունումից հետո՝ 24 ժամվա ընթացքում:
2) Առաջին ընթերցմամբ ընդունված նախագծերի վերաբերյալ գրավոր առաջարկները, ինչպես նաև գլխադասային հանձնաժողովի եզրակացությունը ներկայացնելու համար սահմանել երեքական ժամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա. ՄԻՐԶՈՅԱՆ**

2021 թվական, հունիսի —